ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Նոյեմբեր ամսի սկզբին ռումինահայ թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, նոր վերադարձած Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, հրավիրեց իր մոտ Բուխարեստի հայ համալսարանական երիտասարդներին, որոնք հետևում են հայերեն լեզվի կիրակնօրյա դասընթացներին: Այս առթիվ սրբազան հայրը փոխանցեց երիտասարդներին Վեհափառ Հայրապետի օրհնությունը և գոհունակությունը կատարված աշխատանքների համար և նախագծեց ուսումնական և կազմակերպչական նորանոր ծրագրեր, առաջարկելով նաև այցելություն-ուխտագնացություն դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, դեպի հայրենիք: Նույնպես առաջնորդ սրբազան հոր հովանավորությամբ վերստին սկսվեցին հայերեն լեզվի դասընթացները և մշակութային, գրական, երաժշտական հանդիպումներ և ելույթներ առաջնորդարանի սրահում:

*

* *

Հաջողությամբ շարունակվում է նաև «Կարապետ Իպրըիլեանու» խմբակի գործունեությունը:

— Հոկտեմբերի 20-ին Բուխարեստի համալսարանի դասախոս Սիլվիա Մաթույան-Պուրտեա բանախոսեց Վիեննայի Ազգային գրադարանում գտնվող հայ մշակույթի գանձերի մասին: Տեղի ունեցավ սլայտերի ցուցադրում, իսկ ավարտին ռումեն օպերայի մեներգիչներ Քորնելիա Անճելեսկու, Մարինա Միրեա, Փոմփեյ Հըրըշթյան և Լուտովիք Ցիփիս կատարեցին Շուպերթի, Մոցարտի և Իոհան Ցթրաուսի լիտեր և արիաներ:

— Նոյեմբերի 3-ի ելույթը նվիրված էր հայ բանաստեղծության և արվեստին, որոնց ընթացքում ընթերցվել էին հատվածներ հայ անվանի բանաստեղծների և գրողների գործերից:

— Հաջորդ հանդիպումը վարեց ճարտարապետ Խաչիկ Թագվորյանը ներկայացնելով հայ արվեստի և ճարտարապետության ազդեցությունները ռումեն ժողովրդի մշակութային կյանքում, կանգ առնելով Քուրթեա տե Արճեշ միջնադարյան վանքի վրա: Նույն հանդիպման ժամանակ Ալիս Բամպուքճյանը արտասանեց Վարպետ Մանոլեյի-ն նվիրված ժողովրդական բանաստեղծությունը, իսկ Արամ Տեր-Գրիգորյանը կարդաց ռումեն թարգմանությամբ «Սահակ թըռչունը» հայկական պատմվածքը:

*

* *

Նոյեմբեր ամսի 8-ին մեծ շուքով, Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի նախագահությամբ, տոնախմբվեց Բուխարեստի առաջնորդանիստ եկեղեցու անվանակոչության օրը և մայրաքաղաքում կառուցված նախկին հայկական եկեղեցու 200-ամյակը: Ս. պատարագի ընթացքին առաջնորդ սրբազան հայրը ընթերցեց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հետևյալ հեռագիրը.

«Աստուծո ողորմությամբ լրանում են երկու հարյուր տարիները մայրաքաղաքիդ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցվո հիմնադրության և հիսուն տարիները տիրախնամ թեմիդ պետական ճանաչման: Այս երջանիկ առիթով ձեզ և համայն մեր հավատացյալ զավակներին առաքում ենք Մեր օրհնությունը և բարի մաղթանքը, որ Աստ-

ված անսասան պահի ձեր տիրախնամ թեմը իր եկեղեցիներով և միշտ օգնական պահապան մնա հավատացյալ ժողովուրդին: Մնում ենք նաև տևապես աղոթող ռումեն հայրենիքի և ռումեն ազնիվ ժողովուրդի բարօրության և ծաղկումին համար, խաղաղության մեջ:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգվով»:

Այնուհետև սրբազանը հանդես եկավ գեղեցիկ և հուզիչ քարոզով: Ս. պատարագի ավարտին կատարվեց մատաղօրհնություն, իսկ հետո բոլոր հրավիրյալ հյուրերը, որոնք եկել էին Ռումինիո հայաշատ քաղաքներից և արտասահմանից, մասնակցեցին մատաղի սիրո սեղանին: Առաջնորդ սրբազան հայրը առաջարկեց բաժակ բարձրացնել Վեհափառ Հայրապետի երջանկության և արևշատության կենացը:

*
* *

Նույն օրերին տեղի ունեցավ Բուխարեստում Ժողովրդավարության և Սոցիալիստական Միասնության Ճակատի Գործադիր Կոմիտեի նիստը, որի անդամ է թեմիս առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը: Նիստի ներկաները կազմեցին խաղաղության և զինաթափման նվիրված մի կոչ, բոլոր ժողովուրդներին ուղղված: Որպես արձագանք Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը հրավիրեց Ռումինիո հայ գաղութի բոլոր ներկայացուցիչներին կազմելու համար մի հեռագիր ուղղված Ռումեն պետության նախագահին: Հեռագրում արտահայտվում է հայ ժողովրդի խաղաղասիրական տենչը և երախտագիտությունը հյուրընկալ ռումեն ժողովրդի հանդեպ:

*
* *

Նոյեմբերի 24-ին տոնախմբվեց Բուխարեստի հոգևոր ճեմարանի 100-ամյակը: Այս առթիվ Աստվածաբանական համալսարանը շնորհեց աշխարհի բարձրաստիճան եկեղեցական մտավորականներին «Տոքթոր Հոնորիս Քաուզա» հինգ տիտղոսներ, առաջինը՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ին: Հրավիրագրի ուշացման պատճառով սույն հանդիսությունը կատարվելու է մի հարմար առիթով:

*
* *

Նոյեմբերի 25—26-ին գումարվեց նույն Աստվածաբանական համալսարանում Ռումինիո բոլոր կրոններու ներկայացուցիչների խաղաղության նվիրված ժողովը՝ նախագահությամբ Նորին Սրբություն Տ. Հուստին Մոյսեսքու Պատրիարքի: Հայ Եկեղեցին ներկայացված էր չորս հոգևորականներով՝ գլխավորությամբ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի, որին ուղեկցում էին Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, Տ. Արամայիս աբղ. Շլուկյանը և Սոֆիայից այս աթթիվ հրավիրված Տ. Մեսրոպ քհն. Պենլիյանը: Սույն ժողովին Ռումինիո հայ հավատացյալների և հոգևորականների անունից խոսք առավ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

*
* *

Խորհրդային Հայաստանի 61-րդ տարեդարձի առթիվ առաջնորդարանի սրահում կազմակերպվեց ընդունելություն՝ նախագահությամբ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱԲԵՂԱ ՇԼՈՒԿՅԱՆ